Գ.

Թո՛ւխ աչք ’ւ իմ կամա՛ր ուներ, խորվեցիր զիս հերւից ի վեր.
Սպիտակ ծոցիկ ո՞վ տեսեր, խակ ծըծեր որ դեռ չէ հասեր.
Ե՛կ, իմ խակ ու ժուռ ծըծեր, որ նազով մայրըն սընուցեր,
Զայն ալ իմ ծոցն եմ պահել, քո արեւն այլ մարդ չէ տեսեր:

Դ.

Աչերուս խըրատ տըւի քանց հազար ծընող՝ զաւակի,
Թ’Արե՛կ որ ի վայր նըստինք, աստընւո՛րըս մեզ չիպիտի:
Աչերս այլ ի յիս ասաց թ’ Ես ըքեզ խելօք գիտէի,
Զաղկէկն որ ի գնալ տեսնու, բե՛ր աչեր որ զինք չիհայի:

Ե.

Խընծորն ի ծառու ճըղին, դու ի քո ժամն ես քաղելու.
Բոլորդ ի չար փուշ տընկած, ճար չունիմ ես ի քեզ գալու,
Երթամ ի փըշի ղահրէն ու զըրեի հագնիմ կըռուելու,
Գամ ես հետ փըշին կըռուիմ ու խընծոր քաղեմ խաղալու:

Զ.

Եկան էն խամազ մարդիկն թէ՝ «Բե՛ր զքո եարըն մեզ ցըցո՛ւ.
Տեսնենք ի՞նչ սուրաթ ունի, որ արեր զքեզ խեւ կապելու»:
Իմ եարն ի լուսնի նըման, թուխ ամպի միջին է գալու:

Է.

Կաքւուկ մ’ես երեէկ տեսայ, շատ երնէկ զիւր տէրն ուր ունի.
Ծոցիկն էր գըզած բամպկիկ ու երեսն էր պըպլուկ վարդի.
Պըռկիկըն շաքար մաղէր, շունչըն դեղ էր շատ հիւանդի:

Ը.

Մըտիկ իմ եարին արէք, զիս թողեր է զո՞վ կու սիրէ,
Նըման էն իրացն եղեր որ փողոցն որթոտ կու տընկէ,
Գընտեր չ’իր սիրեր դու զիս, է՞ր կ’ասիր՝ «Թարկ զէն, զիս սիրէ՛»:
Հիմայ ես ի քեզ եկայ, դու կ’ասես թէ «Ինձ չիպիտէ»:

Թ.

Իմ եարս այլ ի դուրս ելաւ, շորորաց ի պաղչան գընաց,
Ձեռքն այլ ի ծառըն ձըգեց, ծառերու ճըղերն երերաց.
Էրաց թէ խընծոր քաղէր, իր ճերմակ ծոցիկն երեւաց.